Հավելված № 2

Ելփին համայնքի ավագանու

2016 թ. նոյեմբերի 11-ի թիվ 17-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ
# ԵԼՓԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Համայնքի ղեկավար Խորեն Ավետիսյան

2016 թ.

2. զենմասվար
3. հավաքարար



Գրադարան

1.գրադարանավար

Աշխատակազմի ենթակառուցների ամբողջ անձնակազմը բաղկացած է 11 անդամից:
Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված ՀՀ կառավարության 14.09.1997 թ թիվ 51 որոշմամբ, հետևյալ կազմով `/գույքացուցակը կցվում է/

Երկրի տնտեսական անկման, սեփական դրամական միջոցների սակավության հետևանքով, համայնքի գույքի ֆիզիկական վիճակը անմխիթար է:
Ոռոգման ներքին ցանցի երկարությունը կազմում է շուրջ 21 կմ, որից 15 կմ-ն ունի խիստ վերանորոգման կարիք:
Վերանորոգման կարիք ունեն նաև խմելու ջրի ջրամբարները, որոնք կառուցվել են անցյալ դարի 60-70 - ական թթ, ունեն խիստ մաշվածություն, որը բերում է ջրի կորստի մեծացմանն, այն հասցնելով 25-30 % -ի:
Վատթար վիճակում են ներհամայնքային ճանապարհները, ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 5 կմ ճանապարհ, 1.5 կմ ասֆալտապատման կարիք ունի:
Ելնելով համայնքի ներկա իրավիճակից անհրաժեշտ է ձեռնարկել որոշ միջոցառումներ համայնքի սոցիալ- տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ, որը կնպաստի բնակչության արտահոսքի կրճատմանը, կենսամակարդակի բարձրացմանը : Այդ նպատակով անհրաժեշտ է համագործակցել տեղական և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ, ինչպես նաև ծրագրերի իրականացման նպատակով դիմել ՀՀ կառավարությանը՝ նպատակային ֆինանսավորում տրամադրելու համար:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գյուղում չունի կենտրոնացված կոյուղու համակարգ, որի կարիքը ներկայումս դարձել է խիստ անհրաժեշտություն: Բնակչության 90 % -ը օգտվում է ինքնահոս ջրամատակարարման ցանցից ՝ շուրջօրյա մատակարարմամբ , իսկ մնացածը օգտվում են ընդհանուր աղբյուրներից:
Աղբահանությունը հիմնականում կատարվում է անհատական ձևով ՝ մոտ 20 % -ի սահմաններում: Հիմնական պատճառը համապատասխան ֆինանսական միջոցների բացակայությունն է: Չկան համապատասխան խողովակներ և կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ներքին ցանցերի վերանորոգման համար , որի պատճառով հաճախ լինում են խափանումներ և ջրի անտեղի կորուստներ:
Գյուղն չունի զբոսայգիներ և անտառային գոտիներ: Համայնքի տարածքում գործում է մեկ բացօթյա խաղահրապարակ , որը գտնվում է գյուղից դուրս և ունի բարեկարգման կարիք: Վերանորոգման, ասֆալտապատման և կանաչապատման կարիք ունեն նաև գյուղի կենտրոնական հրապարակը, մշակույթի տան և դպրոցի շրջակայքը :

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վայոց Ձորի մարզի Ելփին / Նրքին - Էլփին -Ելփին / գյուղը վերաբնակեցվել է 1828թ. ռուս –պարսկական պատերազմից հետո , Սալմաստ գավառի Բրաղես գյուղից տեղափոխված հայերով : Չնայած որ իրականում Նրքին գյուղը գոյություն է ունեցել շատ հնուց , այդ մասին կա հիշատակություն Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն Սիսական » գրքում :

Ելփին գյուղը գտնվում է ներկայիս Վայոց Ձորի մարզի հարավ-արևմտյան մասում : Հողատարածությունները ձգվում են 1400 մ-ից մինչև 2800 մ-ի սահմանները: Գյուղը մարզկենտրոնից հեռու է 25կմ, մայրաքաղաք Երևանից ՝ 96 կմ և հանդիսանում է սահմանամերձ բնակավայր :

Կլիման չոր-կոնտինենտալ է, հաճախակի կրկնվող երաշտներով , որից էլ խիստ տուժում են գյուղատնտեսական մշակաբույսերը :

Ներկայումս համայնքի տարածքում ապրում է 1340 բնակիչ , որոնցից տղամարդիկ կազմում են 660 :

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ / 0-6 տ/ 95
2.դպրոցական / 7-17 տ / 135
3. 18-62 տ 436
4. թոշակառու 236
5. հաշմանդամ 72
6. աշխատունակ 709

Գյուղը ունի 354 ծուխ , որոնցից 62 –ը նպաստառուներ են , 2-ը զոհվածի ընտանիք :

Ելփինի զբաղեցրած վարչական տարածքը 84հա , հիմնական աշխատանք չունի ազգաբնակչության 80 % -ը :

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի / գյուղապետի / կողմից , ով ընտրվում է 5 տարին մեկ անգամ :

2016 թ հոկտեմբերի 2 –ի ընտրություններում Ելփինի համայնքի ղեկավար ընտրվեց Խորեն Սարգիսի Ավետիսյանը :

Նորընտիր ղեկավարը ստեղծեց աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

1. համայնքի ղեկավար
2.համայնքի ղեկավարի տեղակալ
3. աշխատակազմի քարտուղար ծածկ. 2.1-2
4. ֆինանսիստ ծածկ. 2.3-1
5. հաշվապահ ծածկ. 2.3-2
6. մասնագետ ծածկ. 3.1-1
7.հավաքարար
8. օպերատոր

Համայնքի ենթակառուցներն են՝

Մշակույթի տուն

1. վարիչ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում :
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում :
4.Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում :
5.Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:
Հավելված 1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցուցակ:
Հավելված 2. Համայնքի հիմնական միջոցների քանակը և մնացորդային արժեքը :

# Ի՞ՆՉ Է ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Սույն ծրագիրը իրենից ներկայացնում է Ելփին համայնքի սոցիալ-տնտեսական 2016-2020 թթ. իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսվում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացում: Սույն փաստաթուղթը մշակվել է Ելփին համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂՓԻՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ և ՇՐՋԱՆԱՌՈՒ

ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ . ԱՌ 01.01.2016 թ.

| հռ | Փաստացի ստուգման արդյունքները | քանակը | Շահագործման տարեթիվը | Վերագնահատված արժեքը դրամով 1994թ. դրությամբ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | ակումբ | 1 | 1976 | 16.366591 | |
| 2 | Ավտոմեքենա 21-07 | 1 | 2004 | 2,800000 | |
| 3 | Արբանյակային կայան | 2 | 1996/2003 | 1,350000 | |
| 4 | Աղբյուրի շինարարությոըն | 1 | 1979 | 3.764300 | |
| 5 | Մեծ նավես | 1 | 1985 | 288176 | |
| 6 | Անավարտ կառույց/մանկապար/ | 1 | 1990 | 2.067660 | |
| 7 | դարբնոց | 1 | 1952 | 87300 | |
| 8 | աղացարան | 1 | 1952 | 87000 | |
| 9 | գրասենյակ | 1 | 1951 | 57383 | |
| 10 | Հեռուստակայանի շենք | 1 | 2006 | 200000 | |
| 11 | Այծ կրան | 1 | 1983 | 9066 | |
| 12 | աթոռ | 12 | 1982 | 1000 | |
| 13 | կասսա | 8 | 1965 | 3581 | |
| 14 | գրասեղան | 9 | 1982 | 4124 | |
| 15 | Տպագրական մեքենա | 1 | 1982 | 1040 | |
| 16 | հեռախոս | 2 | 2009 | 24000 | |
| 17 | Կշեռք /աղացում/ | 1 | 1971 | 93 | |
| 18 | Սանիտարական պայուսակ | 24 | 1978 | 2576 | |
| 19 | Դեղորայքի ապտեկա | 200 | 1978 | 785 | |
| 20 | էլեկտրակոշիկ | 6 | 1978 | 119 | |
| 21 | ակնոց | 18 | 1978 | 73 | |
| 22 | դնչակալ | 66 | 1978 | 427 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 23 | Ռետինե ձեռնոց | 34 | 1978 | 81 |
| 24 | Հակագազ զպ 57 | 320 | 1978 | 8532 |
| 25 | Հակագազ մեծ | 1 | 1978 | 69 |
| 26 | Ինդ. պակետ | 30 | 1978 | 173 |
| 27 | Պատրոն 16 | 3 | 1978 | 92 |
| 28 | դնչակալ | 12 | 1978 | 123 |
| 29 | Դնչակալի պատրոն | 24 | 1978 | 296 |
| 30 | Ելփինի ջ/կ ոռոգման ցանց | | 1981 | 12091 |
| 31 | Ելփինի ջ/կ ոռոգման ներքին ցանց | | 1973 | 62862 |
| 32 | Պատի ժամացույց | 1 | 1998 | 3500 |
| 33 | Համայնքի գրքեր | 20 | 2001-2010 | 13000 |
| 34 | Կերախոհանոցի տրանսֆորմատոր | 1 | 1982 | 60000 |
| 35 | Ստորերկրյա ջրհոր | 1 | 2001 | 4.565000 |
| 36 | հրամանագրքեր | 7 | 1997-2012 | |
| 37 | Որոշման գրքեր | 5 | 1996-2012 | |
| 38 | կամուրջներ | 6 | | |
| 39 | սպորտհրապարակ | 1 | | |
| 40 | Պետական հեռուստակայան | 1 | | |
| 41 | Կիսախողովակ /աքարա/ | 1 | 2003 | 23.000000 |
| 42 | սեղան | 4 | 2011 | 100000 |
| 43 | Աթոռ երկար | 8 | 2011 | 80000 |

| Ելփինի գյուղապետարանին կտբկ-ի կողմից տրված գուիքացուցակ | | | | |
|---|---|---|---|---|
| h | անվանումը | չ/մ | քանակը | Արժեքը ՀՀ դրամով |
| 1 | Համակարգիչ CPU Dual Core E 2180MB Asus P5G –MX/2xDDR\|\| 512MB HDD 160 GB SATa/Case+ps ESP 350W/DVD-RW/KB Gensis Mouse ort | հատ | 6 | 900000 |
| 2 | Մոնիտոր LG-MNT-L 1753S-BF | հատ | 6 | 240000 |
| 3 | Անխափան սնուցման սարք UPS 800 VA | - | 7 | 180000 |
| 4 | Պատճենահան WC PE 120 | - | 1 | 210000 |
| 5 | Տպիչ Phaser 3117 | - | 1 | 90000 |
| 6 | Սկաներ Scanner XEROX 4800TA | - | 1 | 120000 |
| 7 | WC PE 120/120 I STANDART CARTRIGDE | - | 1 | 13000 |
| 8 | Բարձրախոս Genius SP-110 | - | 6 | 24000 |
| 9 | Քարթրիջ 3117/3122 | - | 1 | 14000 |
| 10 | SWTTCH D –Link 8 port 10/100 | - | 1 | 7000 |
| 11 | Մալուխ Cabel UTP4-C 5E-SOLID-GU | - | 1 | 18000 |
| 12 | Համակարգիչ CPU P43.0/MB Asus P5GC-MX/Cooler LGA 2x DDR \|\| MGB/HDD 250GB Sata /FDD/VC 8500GT 512 MB/Case Foxconn+FSP 400W/DVD-RW-KB 06Mouse opt | - | 1 | 180000 |
| 13 | Մոնիտոր CTX W1961A LCD | - | 1 | 40000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Պատճենահան PHASER 3200MFR/B | - | 1 | 210000 |
| 15 | Բարձրախոս Greative 2.1 A 200 | - | 1 | 8000 |
| 16 | Հոռուստացույց 34" G-Hanz PDP 110-1705 | - | 1 | 385000 |
| 17 | Երաժշտական կենտրոն Sony MHC-GRZ777D | - | 1 | 136000 |
| 18 | Թվային տեսախցիկ Panasonic SDR-h20EE-S | - | 1 | 125000 |
| 19 | Թվային ֆոտոխցիկ Sony DSC-S650/S | - | 1 | 60000 |
| 20 | Համակարգչային սեղան | - | 6 | 180000 |
| 21 | Հեռուստացույցի կախիչ LCD/Piasma Suuport Vogel's VFW165 | - | 1 | 8000 |
| 22 | Սեղան | - | 7 | 210000 |
| 23 | Պահարան | - | 2 | 64000 |
| 24 | Կախիչ | - | 2 | 32000 |
| 25 | Պատերի պաստառ | Մ | 36 | 36000 |
| 26 | Աթոռ | Հատ | 38 | 456000 |
| 27 | Ճերտավարագույր | Մ.քա | 12.58 | 60000 |
| 28 | Մետաղապլաստե դուռ | Մ.քա | 12.78 | 500000 |
| 29 | հատակի ծածկոց | - | 90 | 270000 |
| | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԱՑԻԱ ՀԿ

| | | |
|---|---|---|
| 1 | Սեղան SP \|\| 1570(150/76/75) | 2 միավոր |
| 2 | Համակարգչային սեղանSP\|\| 198-75(120/76/75) | 2միավոր |
| 3 | Պահարան SP\|\|209(80/42/192) | 1 միավոր |

| | | |
|---|---|---|
| 4 | Աթոռ IZO սև | 12 միավոր |
| 5 | Գրատախտակ սպիտակ 60/90 | 1 միավոր |
| 6 | Փափուկ գրատախտակ 60/90 | 1 միավոր |
| 7 | Ֆիլիպ չարտ ստենդ | 1 միավոր |
| 8 | Համակարգիչ բոլոր սարքավորումներով | 2 միավոր |
| 9 | Մոնիտոր Samsung 20-300", 1600x900,250cd/m | 2 միավոր |
| 10 | Բազմաֆունկցոնալ սարք 4-ը մեկում՝Ganon MF4450 | 1 միավոր |
| 11 | Թվային ֆոտոխցիկ Gnon A810 | 1 միավոր |
| 12 | | |

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԸ

| հ/հ | Փաստացի ստուգման արդյունքը | Քանակը | Շահագործման տարեթիվը | Վերագնահատված արժեքը դրամով 1994թ. դրությամբ |
|---|---|---|---|---|
| 1 | ուսիլիտել | 1 | 1980 | 14942 |
| 2 | Սեղան տումբայով | 1 | - | 324 |
| 3 | Աթոռ թիկնային | 403 | - | 64965 |
| 4 | Աթոռ կիսափափուկ | 4 | - | 277 |
| 5 | Սեղան | 3 | - | 1140 |
| 6 | Տրիբուն | 1 | - | 539 |
| 7 | Պահարան | 2 | - | 647 |
| 8 | Միկրոֆոն | 1 | - | 289 |
| 9 | Թենիսի դաշտ | 2 | - | 1194 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Կարմիր զգեստ | 11 | 1986 | 8862 |
| 11 | Մոխրագույն զգեստ | 11 | - | 5182 |
| 12 | Սպիտակ զգեստ | 1 | 1986 | 4014 |
| 13 | Տղամարդու գոտի | 11 | 1986 | 386 |
| 14 | Կանացի գոտի | 11 | - | 587 |
| 15 | Սև արխալուղ | 12 | - | 4277 |
| 16 | Դեղին արխալուղ | 12 | - | 1278 |
| 17 | Սպիտակ քող | 11 | - | 508 |
| 18 | Կլոր քող | 11 | - | 508 |
| 19 | Տղամարդու շալվար | 12 | - | 9757 |
| 20 | Վերնաշապիկ | 11 | - | 9567 |
| 21 | Սպիտակ կոշիկ | 11 | - | 1922 |
| 22 | Պարի սապոկ | 11 | - | 4680 |
| 23 | Կանացի զոզնոց | 11 | - | 1116 |
| 24 | Բեմի գլխա. վարագույր | 1 | - | 2783 |
| 25 | Միջ. Գլ. վարագույր | 2 | - | 7496 |
| 26 | Բեմի կուլիս | 1 | - | 5920 |
| 27 | Դահլիճի վարագույր | 1 | - | 2998 |
| 28 | Բեմի շտանգա | 10 | - | 13206 |
| 29 | Դռների վարագույր | 5 | - | 3430 |
| 30 | Սաֆետ | 4 | - | 1130 |
| 31 | Ստենդ | 2 | - | 770 |
| 32 | JVC | 1 | 2004 | 200000 |
| 33 | JVC300 | 1 | 2004 | 93000 |
| 34 | JVC10 | 1 | 2004 | 125000 |
| 35 | Բարձրախոս | 2 | 2004 | 32000 |

ՕՔՍՖԱՄԻ հայաստանյան գրասենյակի կողմից ֆինանսավորվող „Աղետների ռիսկների նվազեցում" ծրագրի շրջանակնորում „Ապավեն համայնքներին " ԲՀԿ կողմից Եղվին համայնքին տրված ապրանքների ցուցակ :

| հ/հ | Անվանում | Չափի միվոր | քանակ |
|---|---|---|---|
| 1 | Սաղավարտ | հատ | 6 |
| 2 | կարաբին | - | 2 |
| 3 | Ձեռնոց | զույգ | 6 |
| 4 | Ուլենյակ | հատ | 2 |
| 5 | Պարան ստատիկ 10մմ, 40մ | - | 1 |
| 6 | Պաշտպանիչ դիմակ | - | 6 |
| 7 | Լոմ ,1.3մ երկարությամբ | - | 1 |
| 8 | Կացին, 0.8կգ | - | 1 |
| 9 | Մուրճ , 5կգ | - | 1 |
| 10 | Բահ սուր ծայրով | - | 2 |
| 11 | Բարձրախոս | - | 1 |
| 12 | Լապտեր միջին չափսի | - | 2 |
| 13 | Փրկարարական գոտի | - | 2 |
| 14 | Բաճկոն լոգոտիպերով | - | 6 |
| 15 | Պատգարակ | - | 1 |
| 16 | Կրակմարիչ | - | 1 |
| 17 | Բինտ 7/14 | | 4 |
| 18 | բինտ | | 2 |
| 19 | Բամբակ 50գ | | 1 |
| 20 | Սեխմիչ | | 1 |
| 21 | Սեխմիչ | | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 22 | Լեյկոպլաստ 5/500 | | 1 |
| 23 | Մկրատ | | 1 |
| 24 | Ձեռնոց ոչ վարակազերծված | | 20 |
| 25 | Ձեռնոց վարակազեռծված | | 20 |
| 26 | Պինցետ | | 1 |
| 27 | Սանտավիկ H10 | | 2 |
| 28 | Փաթաթան բժշկական | | 1 |
| 29 | Թաց անձեռնոցիկ | | 1 |
| 30 | Անձեռնոցիկ վարակազերծված | | 10 |
| 31 | Անձեռնոցիկ մառլայից | | 2 |
| 32 | Ֆանար | | 1 |

Գրադարանի գույքը

| h/h | անվանումը | քանակը | Շահագործման տարեթիվը | Վերագնահատված Արժեքը դրամով 1994թ դրությամբ |
|---|---|---|---|---|
| 1 | պահարան | 1 | | 308 |
| 2 | գրապահարան | 1 | | 185 |
| 3 | Կատալոգի արկղ | 2 | | 393 |
| 4 | գրադարակ | 32 | | 2922 |
| 5 | ցուցափեղկ | 6 | | 492 |
| 6 | սեղան | 1 | | 623 |
| 7 | ստելիյաժ | 4 | | 623 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8 | Ընթերցանության սեղան | 4 | | 1348 |
| 9 | ելարան | 1 | | 62 |
| 10 | Կիսափափուկ աթոռ | 4 | | 527 |
| 11 | գիրք | 7414 | | |
| 12 | գիրք | 60 | 2009 | 31750 |
| 13 | գիրք | 90 | 2012 | 95600 |
| 14 | գիրք | | 2014 | |

## ԱՅԼ ԳՈՒՅՔԵՐ՝

1. Ինտերնետ կապի սարքավորում յու քոմ
2. Համակարգիչներ բոլոր սարքավորումներով 2 հատ /տեղեկատվական կենտրոն /
3. Տպիչ սարք 1հատ /տ/կ/
4. Ինտերնետ կապ միվասել 1 հատ /տ/կ/

Հանձնաժողով՝

1 Ա. Ալավերդյան նախագահ

2 Ա . Անդրեասյան անդամ

3 Հ. Վարդանյան -

4 Ա. Գրիգորյան -

5 Ջ. Ներսիսյան -

Ելփինի գյուղապետ Ավետիսյան

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 18.6 հազ. քմ, 13.8 բնակ. միավորով, որոնց 100 % -ը մասնավոր է:
Գյուղում առկա է 250 առանձնատուն որոնցից 10-ը արդեն վթարային են . իսկ սողանքի հետևանքով գյուղի արևմտյան թաղամասում շարունակում են վթարային դառնալ շուրջ 32 բնակարան : 1990 թ-ից հետո համայնքի տարածքում գրեթե նոր բնակարաններ չեն կառուցվել , չնայած շուրջ 80 երիտասարդ ընտանիքներ բնակարանի կարիք ունեն :

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի հողային տարածքը կազմում է 5587 հա , որից

| | |
|---|---|
| 1. վարելահող | 589 |
| 2. արոտավայր | 3567 |
| 3. բազմամյա տնկարք | 44 |
| 4. խոտհարք | 129 |
| 5. այլ հողատեսքեր | 1095 |
| 6. բնակավայրի հողեր | 118 |
| 7. ջրային հողեր | 12 |

Հողի սեփականաշնորհմանը մասնակցել են 308 ընտանիք 527 ծխաբաժնով մեկ ծխաբաժինը կազմել է 1.01 հա : Գյուղի տնամերձ հողերը կազմում է 84 հա :
Բնակչության շուրջ 95 % -ը զբաղվում է գյուղատնտեսությամբ` հիմնականում անասնապահությամբ :
Համայնքը ունի շուրջ 1200 գլուխ խոշոր և 150 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 2550 թև հավ, 430 մեղվաընտանիք: Սակայն անասնապահության համար չի ստեղծված համապատասղան պայմաններ: Արոտավայրերը ջրարբիացված չեն, անմխիթար վիճակում են անասունների խմելու ջրի տեղերը: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դրանց արագ բարեկարգմանը:
Համայնքի գյուղացիական տնտեսությունները զբաղվում են նաև խաղողագործությամբ, և պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ: Սակայն ոռոգման ջրի բացակայությունը, ջրատար առուների անմխիթար վիճակը թույլ չեն տալիս ազգաբնակչությանը վարելու ինտենսիվ գյուղատնտեսություն: Խիստ ցածր է մշակաբույսերի բերքատվությունը: Գյուղատնտեսության վարման համար առավել դժվար խնդիր է հանդիսանում նաև արտադրված գյուղմթերքների իրացումը:
Գյուղապետարանն իր առջև խնդիր է դնում առաջիկա տարիների ընթացքում հարց բարձրացնել ՀՀ կառավարություն, վերջնական լուծում տալու արդեն նախագծված 1.2 միլ. մ տարողությամբ ջրամբարի կառուցմանը:
Անհրաժեշտություն կա լիովին վերակառուցել ոռոգման ներքին ցանցը, ստեղծել միասնական ցանց համապատասխան սպասարկման կառույցով: Ծրագիրը կարող է իրագործվել ինչպես համայնքային այնպես էլ այլ կառույցների միջոցներով:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ , ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ

Համայնքը ունի 1 միջնակարգ դպրոց, վերջին տարիներին մասնակի վերանորոգված, որտեղ սովորում են 135 աշակերտ : Դպրոցն ունի 37 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 5 աշակերտ, գործում է սանհանգույց և կոյուղի, ընթացքի մեջ է բակի բարեկարգման աշխատանքները : Անհրաժեշտ կատարել կանաչապատման աշխատանքներ:

Համայնքում գործում է մեկ մշակույթի տուն և գրադարան, որոնց ներքին հարդարման վիճակը գրեթե անմխիթար է: Շարքից դուրս են եկել լուսամուտների փայտյա մասերը, ջարդված են ապակիները, պատերից և առաստաղից թափվել են ծեփամածիկները, խամրել՝ գույները:
Անմխիթար է նաև սպորտային կառույցների վիճակը:
Անհրաժեշտ է ցանկապատել մշակույթի տան հարակից տարածքը, հիմնել անտառազոտի և դրսի հարակից խաղահրապարակում կատարել բարեկարգում:
Համայնքը չունի մանկապարտեզ, չնայած նախագծա-նախահաշվային հաշվարկներ կատարվել են դեռևս 1989 թ. կատարվել են որոշակի աշխատանքներ, և այսօր այն դասվում է անավարտ կառույցների շարքին:
Անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան քայլեր այն ավարտին հասցնելու:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության համակարգում գործում է մեկ բուժկետ՝ 2 բուժքույրերով, որոնք սպասարկում են ամբողջ համայնքին: Բուժկետն ընդգրկված է բրիտանական « OXFAM » բարեգործական կազմակերպության համակարգում, գյուղում գործում է առողջության առաջնային պահպանման / ԱԱՊ / ծրագիրը « Ապավեն համայնքներին » կազմակերպության հովանավորության ներքո:

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ , ԿԱՊ , ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մինչև 1990 թ. գյուղն ունեցել է արդյունաբերական մեկ ձեռնարկություն, որտեղ աշխատում էին շուրջ 80 մարդ: Գործարանը հանդիսանում էր «Աշտարակ ավտո» ընկերության մասնաճյուղը: Ներկայումս այն սեփականաշնորհվել է Եղվարդի գյուղի բնակիչ Մուշեղ Աղախանյանին, սակայն չի աշխատում:
Գյուղում առկա է նաև ալրաղաց, որը ներկայումս նույնպես չի աշխատում:
Համայնքը հեռախոսաֆիկացված է:
Գյուղում գործում է փոստային բաժանմունք, սակայն դեռևս ցածր է սպասարկման որակը: Բավարար վիճակում է հեռուստահաղորդումների սպասարկման որակը:
Գյուղում շատ վատ է գյուղամիջյան ճանապարհների վիճակը: Դրանց ընդհանուր երկարությունն անցնում է 5.5 կմ-ից, սակայն քչ թե շատ բարվոք է 1.5 կմ: Նախատեսնվում է մինչև 2018թ-ի վերջը բարելավել ճանապարհների վիճակը, օգտագործելով ինչպես համայնքի այնպես էլ դոնոր կազմակերպությունների միջոցները: Նախատեսնվում է նաև անհատ բարերարների միջոցներով կարգավորել հանդամիջյան ճանապարհների վիճակը:
Սեփականաշնորհումից հետո համայնքում առկա է հսկայական քանակությամբ ազատ աշխատուժ, ուստի նրանց աշխատանքի մեջ ընդգրկելու համար գյուղապետարանն իր խնդիրն է համարում աջակցել բոլոր նրանց, ովքեր կցանկանան գյուղում հիմնել արդյունաբերական ձեռնարկություններ: Կարևոր է, որ այդ ձեռնարկություններն ունենան վերամշակող ուղղություն: Անհրաժեշտ է նաև այստեղ օգտագործել միջազգային կազմակերպությունների ուժերը:
Բնակչության միայն 1 % -ն է զբաղված առևտրի և սպասարկման ոլորտում, ինը տարերայնորեն զարգացող ճյուղ է:
Մինչև 2018 թ-ի վերջը նախատեսնվում է լուծել համայնքի գազաֆիկացման խնդիրը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքը գտնվում է միջազգային նշանակության ճանապարհի վրա: Հանդիսանում է Վայոց Ձորի մարզի դարպասը:
- Համայնքն ունի տարբեր բուհերն ավարտած գրեթե բոլոր մասնագիտությունների գծով մասնագետներ, բարձր որակավորում ունեցող աշխատուժ:
- Համայնքը հեռախոսաֆիկացված է:
- Համայնքը ունի հեռուստակայան, և հնարավորություն սեփական հեռուստալիքի:
- Գյուղն ունի առևտրի և սպասարկման հիմնական օբյեկտներ, որոնք բավարարում են ազգաբնակչության պահանջարկը:
- 95 %-ով գրեթե մատակարարվող շուրջօրյա խմելու ջուր:
- Բարենպաստ բնակլիմայական պայմաններ
- Տիպային մշակույթի տուն և դպրոցի շենք:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ներհամայնքային և հանդամերձյան ճանապարհների և փողոցների վատ վիճակ:
- Թաքնված գործազրկության բարձր տոկոս:
- Արտագաղթի տարեց-տարի մեծացող ծավալներ:
- Սանիտարա-հիգենիկ վատ վիճակ:
- Բնակչության 40 %-ից ավելին սոցալապես անապահով է, 20 %-ը՝ ծայրահեղ աղքատ:
- Չունի մշտական ոռոգման ջուր, վատթար վիճակում են ոռոգման ցանցերը:
- Առկա են բնակարանային հիմնահարցեր:
- Չունի կոյուղու համակարգ, գազաֆիկացված չի:
- Ծնելիության նվազում. ազգաբնակչության ծերացում:

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Գյուղը գտնվում է ստորերկրյա տեկտոնական խզման գոտում, առկա են սահքի երևույթներ:
- Բնակչության մեծամասնությունն անապահով է և չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունն:
- Վթարային շենքերի առկայություն:
- Խմելու և ոռոգման ցանցերի մաշվածություն:
- Շրջակա միջավայրի նկատմամբ անխնա վերաբերմունք:
- Փողոցների սանիտարական վատ վիճակ, համաճարակների ռիսկայնություն:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Համայնքի ղեկավարությունը հաշվի առնելով բնակչության պահանջները, սահմանում է համայնքի զարգացման հետևյալ ռազմավարությունը՝ գյուղը դարձնել ավելի բարեկարգ, բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, աջակցել արդյունաբերական ձեռնարկությունների

վերագործարկմանը և նորերի կառուցմանը, օժանդակել գյուղմթերքների ավելացմանն ու իրացմանը:

**ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ՝ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊԵՒՄ**

2018 թ.

----------

## ԾՐԱԳԻՐ 1

------------------

Ելփին գետի վրա 1.2 միլիոն մ տարողությամբ ջրամբարի կառուցում

**Նպատակ**

---------------

Գյուղը ապահովել ոռոգման ջրով:

Խնդիր 1

-------------

Գյուղը գտնվում է կլիմայական չոր կոնտինենտալ գոտում, որի պայմաններում առանց ոռոգման հնարավոր չե զբաղվել գյուղատնտեսական մշակաբույսերի մշակությամբ: Հետևաբար խնդրի նպատակն է Ելփին գետր վրա կառուցել ջրամբար, այնտեղ կուտակելով գարնան ձնհալքի ջրերը. լուծել համայնքի ոռոգման ջրի պահանջը:

Ոռոգման ջրի բացակայությունը բերել նրան, որ համայնքի բնակչությունն բռնի արտագաղթի ճանապարհ, լքելով հայրենի գյուղը, այնտեղ չտեսնելով ապրելու հնարավորություն, վտանգելով գյուղի հետագա գոյությանը:

Ելփինը հանդիսանում է նաև սահմանամերձ գյուղ, հետևաբար գյուղի հետագա գոյությունը կարևոր է մեր պետությանը ստրատեգիական տեսակետից:

Սույն ծրագրով առաջարկվում է Ելփին գետի վրա կառուցել 1.2 մլ. մ տարողությամբ ջրամբար: Ծրագրի նախագծա- նախահաշվային աշխատանքներն ավարտվել են 2012 թ.: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3.8 մլ. դոլլար:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Խնդիր 2

------------

Մինչև 2017 թ. սեպտեմբերը հարց բարձրացնել ՀՀ կառավարության առջև 2018 թ. պետական բյուջեով նախատեսելու ծրագրի ֆինանսավորումը:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

## ԾՐԱԳԻՐ 2

------------------

Համայնքում կոյուղու ցանցի կառուցում

**Նպատակը**

--------------

Բնակչությանն ապահովել կենտրոնացված կոյուղու համակարգով:

խնդիր 1

-------------

Գյուղում գնալով էլ ավելի վաթարանում սանիտարա-հիգենիկ վիճակն, իսկ դրա պատճառներից մեկն է կոյուղու բացակայությունը:

Առանձին քաղաքացիների կողմից կառուցված կոյուղու ցանցերը թափվում են Ելփին գետի մեջ աղտոտելով գետը, իսկ ամռանը ջրի բացակայության պատճառով տարածելով գարշահոտություն և հիվանդությունների տարածման վտանգ: Ուստի գնալով էլ ավելի հրատապ է դառնում համայնքի տարածքում կառուցել կենտրոնացված կոյուղու համակարգ համապատասխան սեպտիկ կառույցներով:

Սույն ծրագրով առաջարկվում է Ելփին գետի աջ և ձախ մասերով անցկացնել կոյուղու խողովակաշար, որի երկարությունը կկազմի մոտ 2.5 կմ Д=300-350 մմ, այն հասցնել մինչև բնակավայրի ներքևի մաս այնտեղ կառուցել համապատասխան սեպտիկ կայան, որը կմաքրի կոյուղաջրերը և նոր բաց կթողնի դեպի գետ: Իսկ քաղաքացիներին և թաղամասերին առաջարկվում է իրենց ուժերով կոյուղագծերը մոտիկացնեն և միացնեն ընդհանուր ցանցին:

Ծրագրի իրագործման համար կպահանջվի նախնական հաշվարկով մոտ 90 միլիոն դրամ:

Խնդիր 2

--------------

Մինչև 2018 թ. հունվարի 1-ը համայնքապետարանի և այլ դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին կատարել նախագծա-նախահաշվային աշխատանքները:

Պատասխանատու համայնքի ղեկավար, ֆրնանսիստ

Խնդիր 3

-----------------

2018 թ. փետրվարից աշխատանքներ տանել համապատասխան կառույցների հետ շինարարությունը սկսելու համար:

Պատասխանատու համայնքի ղեկավար, աշխատակազմ

ԾՐԱԳԻՐ 3

--------------------------

« Տանձիկի առվի » ոռոգման ջրատարի վերակառուցում

Նպատակ

-------------

Բնակչությանն ապահովել կանոնավոր և անկորուստ ոռոգման ջրով:

Խնդիր 1

-------------

Գյուղի ոռոգելի հողերի շուրջ 140 հա-ն կանոնավոր ոռոգելու համար անցյալ դարի 30-ական թթ կառուցվել է ինքնահոս մայր առու, սակայն ջրի սակավության և կորուստների պատճառով այն աշխատում է միայն գարնանը, ուստի „Հերմոն-Ելփին" նոր ջրագծի ինքնահոս ջրերի տեղափոխման համար անհրաժեշտ է կազմակերպել և վերակառուցել «Տանձիկի առուն»: Անհրաժեշտ է այն վերցնել կիսախողովակի մեջ շուրջ 2000 մ, տեղադրել 15 ջրբաշխիչ թուջե սողնակներ Д-150 մմ:

Ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 96 մլն. դրամ:

Խնդիր 2

------------

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ 2018 թ պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու նպատակով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություններ 96 մլն. դրամի ֆինանսավորման հայտ:

Ժամկետը 2018 թ սեպտեմբեր - նոյեմբեր

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար, ֆինանսիստ
Խնդիր 3
--------------
Ծրագիրն իրագործել 2019 թ ապրիլ-սեպտեմբեր ամիսների ընթացքում, շահագործման հանձնել 2019թ հոկտեմբերից: Անհրաժեշտության դեպքում ապահովել համապատասխան ներդրում: Ծրագրից կօգտվեն շուրջ 100 ընտանիք, կանոնավոր և անկորուստ կոռոգվի շուրջ 140 հա գյուղատնտեսական հողատարածք: Կբարձրանա մշակվող մշակաբույսերի բերքատվությունը, կբարելավվի ընտանիքների ֆինանսական և կենսական պայմանները:
Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

## ԾՐԱԳԻՐ 4

Համայնքի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
Նպատակը
----------------
Համայնքի դաժտամիջյան ճանապարհները դարձնել նորմալ երթևեկելի տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական մեքենաների և մեխանիզմների համար:
Խնդիր 1
-------------
Հարթեցնել և բարեկարգել տարբեր հանդամասեր գնացող դաշտամիջյան ճանապարհները, մոտ 20 կմ երկարության հատվածներում: Համայնքի 2017 թ բյուջեում այս աշխատանքների կատարման համար նախատեսել 0.8 մլն. դրամ: Կատարման ժամկետը մայիս- հուլիս 2017 թ.
Պատասխանատու՝ աշխատակազմի մասնագետներ:

## ԾՐԱԳԻՐ 5

---------------------
Մշակույթի տան հարակից տարածքում սպորտային խաղահրապարակի և կանաչապատ հնգստի գոտու հիմնում
Նպատակը
----------------
Մշակույթի տան հարակից տարածքում հիմնել ցանկապատված հանգստի գոտի և մանկական խաղահրապարակ
Խնդիր 1
--------------
Դոնոր կազմակերպությունների ինչպես նաև համայնքի միջոցներով ձեռք բերել 300 մ մետաղյա ցանց 150 հատ 2 մետրանոց մետաղյա ձողեր, 200մ խողովակ Д=100 մմ, փականներ 10 հատ, այնուհետև կատարել հողհարթեցման աշխատանքներ 0.3 հա վրա, հիմնել 1 հա անտառաշերտ, տեղադրել այգու նստարաններ և մանկական ճոճանակներ: Ծրագրի նախնական արժեքը կազմում է 2.5 մլն. դրամ:
Պատասխանատու՝ համայնքի ղեկավարի տեղակալ
Խնդիր 2
---------------
Մինչև 2017թ. ավարտը կատարել շինարարության նախագծա-նախահաշվային աշխատանքները, ապահովել համայնքի կողմից 10% ներդրումը:

Այգու կառուցապատումն սկսել և ավարտել 2018թ. մարտից- հունիսն ընկած ժամանակահատվածում :
Պատասխանատու ՝ համայնքի ղեկավարի տեղակալ

ԾՐԱԳԻՐ 6

---

Ելփին համայնքի մշակույթի տան և գրադարանի ներքին հարդարում, և ջեռուցման անցկացում
Նպատակը

---

Ամբողջությամբ վերանորոգել մշակույթի տան շենքը և անցկացնել ջեռուցման նոր համակարգ :
Խնդիր 1

---

Շենքը կառուցվել է 1978թ. և մինչև այսօր չի անցել ոչ մի կարգի վերանորոգում : Ջարդվել են լուսամուտների ապակիները , դռները, քայքայվել են պատերի ծեփամածիկները, պոկվել է մանրահատակը: Մշակույթի տունը չունի սանհանգույց և ապահոված չէ խմելու ջրով:
Անհրաժեշտ է ամբողջությամբ հարդարել ներքին պատերը, առաստաղը, փոխել դռներն և լուսամուտները նորերով, անցկացնել նոր սանհանգույց և ջեռուցում :
Կատարվելիք աշխատանքների ծավալը կազմում է՝ ներքին հարդարման աշխատանքներ ՝ 4000 քմ, մանրահատակ՝ 600 քմ , 20 դուռ , 40 լուսամուտ :
Աշխատանքների կատարման նախնական արժեքը կազմում է մոտ 20 մլն. դրամ:
Պատասխանատու՝ համայնքի ղեկավար
Խնդիր 2

---

Մինչև 2017թ. մայիսի 1-ը ավարտել դոնոր կազմակերպության և համայնքի ուժերով նախագծա-նախահաշվային աշխատանքները: Շինարարական աշխատանքները սկսել 2017 օգոստոսի 1-ից և ավարտին հասցնել 2017թ. դեկտեմբերի 1-ին :
Աշխատանքներն իրականացնել ՀՄՆՀ-ի հետ կատարելով համապատասխան ներդրում :
Պատասխանատու ՝ համայնքի ղեկավար, աշխատակազմ

ԾՐԱԳԻՐ 7

---

Համայնքի գազաֆիկացում
Նպատակը

---

Բարելավել ազգաբնակչության կենցաղային պայմանները :
Խնդիր 1

---

Մինչև 2017թ. ավարտը ձեռք բերել կառավարության և մարզպետարանի աջակցությունը՝ համայնքի գազաֆիկացման աշխատանքները կազմակերպելու համար:
Պատասխանատու՝ համայնքի ղեկավար
**Խնդիր 2**

---------------

Մինչև 2018թ մարտից կազմակերպել բնակչությանն գազաֆիկացման աշխատանքները սկսելու համար կատարելու համապատասխան ներդրումներ: Համյնքի ընդհանուր գազաֆիկացումը կատարել 2019թ.:
Պատասխանատու՝ համայնքի ղեկավարի աշխատակազմ:

## ԾՐԱԳԻՐ 8

------------------

Երևան-Եղեգնաձոր ավտոմայրուղուց դեպի դպրոց գնացող ճանապարհի ասֆալտապատում

**Նպատակը**
Համայնք մտնող ճանապարհը դարձնել բարեկարգ և երթևեկելի տրանսպորտային միջոցների համար:
**Խնդիր 1**

------------

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությունը իր առջև խնդիր է դրել հատկացնել համապատասխան միջոցներ միջհամայնքային և համայնքային ճանապարհների բարեկարգման համար: Սույն ծրագրով խնդիր է դրվում Ելփին համայնքի կողմից ճանապարհաշինության համար մինչև ծրագրի իրագործումը կատարել համապատասխան փափուկ գրունտի հատկացում:
Նախատեսվում է մայրուղուց մինչև դպրոց ընկնող հատվածի ասֆալտապատում 2 կմ, ժամկետը 2017-2020թթ.
Պատասխանատու՝ համայնքի ղեկավար, աշխատակազմ

## ԾՐԱԳԻՐ 9

-----------------------

«Աղոպենի» ջրամբարի վերակառուցում
**Նպատակը**

---------------

Ապահովել համայնքի շուրջ 100 ընտանիք շուրջօրյա խմելու ջրով, բացի դրանից ջրամբարի ներքևի մասում գտնվող շուրջ 20հա վարելահողը դարձնել ոռոգելի:
**Խնդիր 1**

-------------

1950թ. Ելփին գյուղի բնակիչների ուժերով գյուղի հյուսիս-արևմտյան մասում, համայնքից 3.5կմ հեռավորության վրա կառուցվել է 30-40 հազար մետր խորանարդ տարողությամբ կուտակիչ ջրամբար, որը բնական ֆիլտրացիայի միջոցով իրենից 300մ ներքև առաջացնում է խմելու ջրի բնական աղբյուրներ: Այդ աղբյուրները 60-ական թվականներին տեղափոխվել է գյուղ և բաժանվել ազգաբնակչությանը որպես խմելու ջուր: 1998թ «Փրկեցեք երեխաներին» կազմակերպության միջոցով մասնակի վերանորոգվել է կապտաժները, ջրագծերը և 100 ընտանիքի համար տեղադրվել է

բաժանարար ։ Սակայն տարիների ընթացքում ջրամբարից մեծացել է բնական ֆիլտրացիան, քանդվել է ջրամբարը սնող ջրաբեր առուն, որի պատճառով հնարավոր չէ կուտակել համապատասխան քանակի ջուր, մինչ դեռ որոշակի աշխատանքներ կատարելուց հետո հնարավոր է ավելացնել կուտակվող ջրի քանակը, որի դեպքում ջրամբարը կարող է ընդհանրապես չցամաքել և լուծել համայնքի խմելու ջրի խնդիրն ընդհանրապես ։
Սույն ծրագրով առաջարկվում է 2 մ բարձրացնել դիմացի պատվարը, որի երկարությունը կազմում է 45 մ, լայնությունը՝ 10 մ: Տեղափոխվող ապարների ծավալը կազմում է 1000մ/ խ ։ Ապարի տեղափոխումը կկատարվի մինչը 1 կմ հեռավորությունից ։ Միաժամանակ պետք է կատարել ջրամբարը սնող առվի կիսախողովակացման կամ խողովակացման աշխատանքներ 800 մ երկարությամբ Д=300 մմ:
Ծրագրի իրագործման համար կպահանջվի մոտ 15 մլն. դրամ:
Ծրագիրը նախատեսվում է իրագործել «Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի» կամ ՀՄՆՀ-Ի միջոցներով ։
**Խնդիր 2**

------------

Մինչև 2019 թ մարտի 1-ը մշակել ջրամբարի վերանորոգման ծրագիրը, որի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 18 մլն. դրամ և ներկայացնել վերոհիշյալ կազմակերպություններին ։ Անհրաժեշտության դեպքում ապահովել ներդրումներով ։ Շինարարությունը սկսել և ավարտել 2019 թ:
Պատասխանատու՝ համայնքի ղեկավար, աշխատակազմ ։

## ԾՐԱԳԻՐ 10

Հիսուն տեղանոց մսուր- մանկապարտեզի կառուցում
Նպատակը

Նպաստել նախադպրոցական հասակի երեխաների խնամքի և դաստիարակչության կազմակերպմանը
**Խնդիր 1**
Կառուցել հիսուն տեղանոց նոր մանկապարտեզի շենք բարերարների և բարեգործական կազմակերպությունների օգնությամբ ։
Ծրագրի իրագործման նախահաշվային արժեքը կազմում է մոտ 15 մլն. դրամ ։ Անհրաժեշտության դեպքում ապահովել համայնքային ներդրում ։
Ծրագրի իրագործման ժամկետ սահմանել մինչև 2020 թ. օգոստոսը ։
Պատասխանատու՝ համայնքի ղեկավար, աշխատակազմ

## ԾՐԱԳԻՐ 11

Ինքնահոս ջրատարի կառուցում „Դոլերի փոս„ հանդամասի տարածքում
Նպատակը

Ինքնահոս ոռոգման ջրով ապահովել շուրջ 20 հա ջրովի վարելահող
**Խնդիր 1**
Կառուցել 400մ նոր ջրագիծ /Д- 150մմ / „Հերմոն Ելփին „ ջրագծի ջրթափ ավազանից դեպի „Դոլերի փոս„ հանդամաս ,ջրատարը նախատոսնվում է կառուցել ՀՄՆՀ և այլ դոնոր կազմակերպությունների միջոցներով համայնքը պետք է կատարի 10% ներդրում ։ Ծրագրի իրագործման մոտավոր արժեքը կազմում է 10միլ. դրամ ։

Ծրագրի իրագործման ժամկետը սահմանել 2017թ վերջը:

Ծրագիր 12

,,Շիկալանջի,, առվի վերակառուցում 480 մ կիսախողովակի տեղադրում
**Նպատակը**
Վերակառուցել ,,Շիկալանջի,, առվի գլխամասը տեղադրելով 480 մ կիսախողովակ D-400
**Խնդիր 1**
Վերակառուցել ,, Շիկալանջի,, առվի գլխամասը տեղադրելով կիսախողովակ գետառից մինչև Ա. Գրիգորյանի տան մոտ 480մ :Վերակառուցումից հետո այն կբարելավի շուրջ 60 ընտանիքի ոռոգման ջրի մատակարարումը: Նախնական հաշվարկներով ծրագրի մոտավոր արժեքը կազմում է մոտ 30միլ. դրամ: Նախատեսվում է ծրագիրն իրագործել միջազգային կազմակերպությունների և համայնքի ներդրումների հաշվին: Նախատեսվում է մինչև 2017թ ավարտը կատարել նախագծային աշխատանքները, ծրագրի իրագործումը սկսել 2018մ մայիսից:
Պատասխանատու համայնքի ղեկավար

Ծրագիր 13

,,Շիկահողի,, սելաֆատարի կառուցում
**Նպատակը**
Նախկին կալի վրայից մինչև Վ, Խաչատրյանի խանութի մոտ ճանապարհի կողքին կառուցել սելաֆատար
**Խնդիր 1**
Այն թաղամասի բնակչությանը կապահովի սելաֆների վտանգից:
Անհրաժեշտ է ճանապարհի կողքով անցկացնել 200 մ կիսախողովակ: Նախնական հաշվարկներով ծրագրի մոտավոր արժեքը կկազմի շուրջ 10 միլ. դրամ:, Ծրագիրն նախատեսնվում է իրագործել ՀՀ. Արտակարգ իրավիճակների նախարարության և համայնքապետարանի միջոցներով:
Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

**Ենթածրագիր 1**
**Բնակչության սոցիալ- տնտեսական, կենցաղային պայմանների բարելավման համար նոր աշխատատեղերի հիմնում**
**<u>Խնդիր 1</u>**
2016-2020թթ ընթացքում նոր աշխատատեղերի բացման նպատակով աջակցել, թե դրսի, թե ներսի գործարար մարդկանց գյուղի տարածքում գործակցելու ինչպես հին այնպես էլ նոր կառուցվող ձեռնարկությունները: Սալով դրանց հիմնականում գյուղմթերքների վերամշակման ուղղվածություն /չրերի արտադրում, սառնարանային տնտեսության հիմնում և այլն/:

## <u>ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ</u>

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, այն ունի հետևյալ պատկերը:

| h/h | ցուցանիշներ | Չափի | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 |
|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | միավոր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | բնակավայրի տարածքը | հա | 82 | 82 | 84 | 84 | 85 | 85 |
| 2 | բնակչության թիվը | մարդ | 1335 | 1340 | 1335 | 1330 | 1335 | 1340 |
| 3 | ծնունդ | - | 14 | 10 | 10 | 13 | 12 | 13 |
| 4 | մահացություն | - | 14 | 12 | 10 | 12 | 14 | 15 |
| 5 | աշխատանքային ռեսուրսները , այդ թվում | - | 734 | 735 | 744 | 739 | 733 | 728 |
| | -զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի | մարդ | 710 | 709 | 717 | 710 | 700 | 690 |
| | - արտադրությունից կտրված սովորողներ | - | 12 | 12 | 13 | 14 | 15 | 15 |
| | - գործազուրկի կարգավիճակ ունեցողներ | - | 12 | 14 | 14 | 15 | 18 | 18 |
| 6 | գործազրկության մակարդ. | տոկոս | 1.7 | 1.8 | 1.9 | 2.0 | 2.1 | 2.2 |
| 7 | առևտրի և հասարակական սննդի օբեկտների թիվը | քանակ | 6 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | առևտրի օբեկտներ | - | 5 | 5 | 6 | 6 | 7 | 7 |
| 8 | էլեկտրաէներգիայի սպառում այդ թվում, | մլն. կվտ/ժ | 0.21 | 0.22 | 0.23 | 0.23 | 0.24 | 0.25 |
| | բնակչության կողմից | | 0.13 | 0.14 | 0.15 | 0.16 | 0.18 | 0.19 |
| 9 | արդյունաբերական արտադրանքի ծավալը , այդ թվում՝ | մլն . դրամ | - | - | - | - | - | - |
| | - մասնավոր | - | - | - | - | - | - | - |
| | - պետական | - | - | - | - | - | - | - |
| 10 | գյուղատնտեսական համախառն արտադրանքը ,այդ թվում | մլն. դրամ | | | | | | |
| | բուսաբուծություն | | 155 | 160 | 170 | 180 | 182 | 190 |
| | անասնաբուծություն | | 76 | 80 | 85 | 90 | 95 | 100 |
| 11 | պահուստային հողեր | հա | 4986 | 4980 | 4980 | 4980 | 4980 | 4980 |
| 12 | պահուստային հողերի օգտագործման մակարդակը | % | 20 | 21 | 25 | 30 | 30 | 32 |
| 13 | ներհամայնքային ոռոգման ցանցերի երկարությունն | կմ | 16 | 18 | 20 | 20 | 22 | 23 |
| 14 | ոռոգման ցանցի տակ գտնվող հողատարածքը | հա | 180 | 185 | 195 | 200 | 210 | 215 |
| 15 | ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը, այդ թվում | կմ | 100 | 100 | 100 | 102 | 102 | 102 |
| | փողոցներ , որից | | 5 | 5 | 5 | 5 | 6 | 6 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կոշտ ծածկույթով | | 4 | 4 | 4 | 4 | 4 | 5 |
| | -ճանապարհներ , որից | | 100 | 100 | 100 | 102 | 102 | 102 |
| | կոշտ ծածկույթով | | 95 | 95 | 95 | 95 | 95 | 95 |
| 16 | Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը | կմ | 23 | 24 | 26 | 23 | 22 | 20 |
| 17 | բնակֆոնդը , այդ թվում՝ | հազ.քմ | 18.5 | 18.5 | 18.6 | 18.6 | 18.6 | 18.8 |
| | պետական | | | | | | | |
| | մասնավոր | | 18.5 | 18.5 | 18.6 | 18.6 | 18.6 | 18.8 |
| 18 | բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը | հատ | 100 | 100 | 98 | 96 | 94 | 92 |
| 19 | ջեռուցվող բնակելի մակերես | հազ.քմ | 3.225 | 3.225 | 3.23 | 3.24 | 3.25 | 3.25 |
| 20 | խմելու ջրի մեկ շնչին ընկնող սպառումը | լ/օր | 150 | 150 | 160 | 180 | 190 | 200 |
| 21 | ջրի կորուստները ցանցում | % | 20 | 20 | 18 | 18 | 16 | 14 |
| 22 | տեղափոխվող աղբը | տոննա | 20 | 20 | 30 | 35 | 40 | 45 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | բնակչությունից | տոննա | 20 | 20 | 30 | 35 | 40 | 45 |
| 23 | կանաչապատ տարածքներ | հա | 1 | 2 | 2 | 2.5 | 3 | 5 |
| 24 | համայնքին հատուկ շրջակա միջավայրի անվտանգությանը սպառնացող ցուցանիշներ | | | | | | | |
| 25 | նախադպրոցական հիմնարկների թիվը | | | | | | | |
| | -տարածքը | | | | | | | |
| | -երեխաների թիվը | | | | | | | |
| 26 | սովորողների թիվը ցերեկային հանր . դպրոց. այդ թվում | մարդ | 140 | 135 | 135 | 140 | 140 | 140 |
| | -տարական դպրոցում | | | | | | | |
| | միջին դպրոցում | | | | | | | |
| | ավագ դպրոցում | | 140 | 135 | 135 | 140 | 140 | 140 |
| 27 | արտադպրոցական հիմնարկներում ընդգրկվածների թիվը | մարդ | | | | | | |
| 28 | ընդունելիությունը միջին մասնագիտացված ուսումնական հաստատություններում ( վճարովի և անվճար ) | մարդ | 2 | 3 | 3 | 4 | 5 | 6 |
| 29 | ընդունելություն | | 12 | 12 | 13 | 14 | 15 | 18 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | բարձրագույն ուսումնական հաստատություններում | | | | | | | |
| 30 | բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների թիվը . այդ թվում | | 5 | 5 | 5 | 6 | 6 | 7 |
| | պետական | | 3 | 1 | 2 | 3 | 3 | 4 |
| | մասնավոր | | 2 | 4 | 3 | 3 | 3 | 3 |
| 31 | մշակույթի տարբեր ոլորտների մասնագիտացված դպրոցներում սովորողների թիվը | | 2 | 2 | 2 | 1 | 2 | 3 |
| 32 | մշակույթի տներում խմբակների մեջ ընդգրկվածների թիվը | | | | | | | |
| 33 | հիվանդանոցների թիվը | | | | | | | |
| 34 | 1000 բնակչին ընկնող բժիշկների թիվը | | | | | | | |
| 35 | 1000 բնակչին ընկնող բուժանձնակազմի թիվը | մարդ | 1.4 | 1.4 | 1.4 | 1.4 | 1.4 | 1.4 |
| 36 | 1000 բնակչին ընկնող մահճակալների թիվը | | | | | | | |
| 37 | ամբուլատոր-պոլիկլինիկ հիմնարկների հզորությունն | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 38 | ծննդատների մահճակալների թիվը | | | | | | | |
| 39 | առողջարաններում տեղ. թ | | | | | | | |
| 40 | անապահով ընտանիքների թիվը | հատ | 100 | 100 | 95 | 95 | 90 | 80 |
| 41 | համայնքի անդամներին սոցիալական ծառայությունների կողմից տրամադրված օգնությոջները այդ թվում | մլն դրամ | 15 | 15 | 15 | 16 | 16 | 17 |
| | -համայնքի բյուջեից | | 1.0 | 1.2 | 1.3 | 1.3 | 1.4 | 1.5 |
| 42 | համայնքապետարանում աշխատողների թիվը | մարդ | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| 43 | ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը այդ թվում | | | | | | | |
| | -ձեռնարկություններ | | | | | | | |
| | -անհատ ձեռներեցներ | | 10 | 10 | 12 | 14 | 15 | 18 |
| | ընկերություններ | | | | | | | |
| 44 | բնակչության մեկ շնչին ընկնող համայնքի բյուջետային եկամուտները | հազ. դրամ | 23.9 | 23.9 | 24.0 | 25.0 | 25.0 | 25.5 |
| 45 | սեփական եկամուտների բաժինը համայնքի բյուջեի | | 23.0 | 23.0 | 23.6 | 24 | 24.5 | 25 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | եկամուտների մեջ | % | | | | | | |
| 46 | կապիտալ ծախսումների տեսակարար կշիռը բյուջ. ծախս. մեջ՝ այդ թվում | | | | | | | |
| | -սեփական միջոցների հաշվին | | | | | | | |
| | -ներգրավված միջ. հաշվին | | | | | | | |

| Հ/հ | Եկամուտներ | Փաստացի եկամուտներ/հազ. դրամ/ | | | Կանխատեսում /հազ. դրամ/ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 |
| | եկամուտներ ընդամենը | 29415 | 29415 | 32340 | 33400 | 35920 | 36920 | 38675 |
| Ա | հարկային եկամուտներ | 4050 | 4600 | 4650 | 4650 | 4750 | 4750 | 5150 |
| 1 | հողի հարկ | 1750 | 1800 | 1850 | 1850 | 1850 | 1850 | 1850 |
| 2 | գույքահարկ | 2300 | 2800 | 2800 | 2800 | 2900 | 2900 | 3300 |
| 3 | եկամտահարկ | | | | | | | |
| 4 | այլ հարկային եկամուտներ | | | | | | | |
| Բ | տուրքեր | 150 | 150 | 150 | 170 | 175 | 180 | 190 |
| Գ | ոչ հարկային եկամուտներ | 1109 | 3557 | 250 | 250 | 280 | 300 | 350 |
| 1 | հողի վարձավճար | 214 | 257 | 260 | 280 | 300 | 350 | 400 |
| 2 | գույքի վարձակալություն | 295 | - | - | - | | | |
| 3 | տեղական վճարներ | | | | | | | |
| 4 | այլ ոչ հարկային եկամուտներ | | | - | 500 | 500 | 600 | 700 |
| Դ | պաշտոնական տրանսֆերտներ դոտացիաներ | 22000 | 22000 | 23400 | 24300 | 25300 | 26300 | 27300 |
| 5 | տարեսկզբի ազատ մնացորդ | | | | 2050 | 1800 | 1500 | 1500 |